

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՌԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՐ ԼՈՒՍԱՌԻՉ ԱՆԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԿ




**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 3 Մարտ 2019

100

DIMANCHE, 3 Mars 2019



## ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
stgregorychurch@gmail.co | www.saintgregory.ca

**ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ  
CARNIVAL**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԵՆԵՆ**

**58.1-14**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ**

**ՀՈՒՄԷԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԿԾ ՆԱՄԱԿԵՆ**

**13.11-14.23**

**ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ**

**ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ**

**7.37-52**

**Les lectures de la Bible d'aujourd'hui :**

**Romains 13.11-14.23**

**Matthieu 6.1-21**

**Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ  
ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ**

**Célébrant: Prêtre Paroissial**

**RÉV. PÈRE DAVID MARGARYAN**

**Առաւօտեան ժամերգութիւն 9:30-ին**

**Office Matines à 9 :30**

**Ս. Պատարագ ժամը 10:30-ին**

**La Sainte Messe à 10:30**

**Հոգեհանգստեան Պաշտօն կեսօրին**

**Office de Requieme à Midi**

**Deacons - Acolytes**

**Choirmaster: Mr. Sarkis Barsemian**

**Organists: Mr. Karen Manucharyan**

**Mrs. Houri Bedrossian**

# ԿԻՐԱԿՆՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՍԷԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (13.11-14.25)

Եւ այսպէս ըրէք, գիտնալով թէ ժամանակն է, որ քունէն արթըննանք. վասն զի հիմա մօտ է մեզի փրկութիւնը՝ քան թէ այն ատեն որ հաւատացինք: Գիշերը շատ անցած է ու ցորեկը մօտեցած. ուստի մէկդի ընենք խաւարին գործերը ու մեր վրայ հագնինք լուսոյ զէնքերը: որպէս զի ցորեկ ատեն՝ պարկեշտութեամբ պտըտինք, ո՛չ թէ անառակութիւններով ու գիտովութիւններով եւ ո՛չ թէ խառնակ անկողիններով ու պղծութիւններով եւ ո՛չ թէ հակառակութիւնով ու նախանձով. Հապա ձեր վրայ հագէք Տէր Յիսուս Քրիստոսը ու ինամք մի՛ տանիք մարմնին՝ ցանկութիւններու համար:

Հաւատքի մէջ տկար եղողը ընդունեցէք, ո՛չ թէ տարակուսական որոշումներով: Մէկը կը հաւատայ թէ ամէն բան կրնայ ուտել եւ ան որ տկար է՝ կանանչեղէն կ'ուտէ: Ան որ կ'ուտէ չուտողը թող չանարգէ՝ ու ան որ չ'ուտէր՝ ուտողը թող չդատէ՝, վասն զի Աստուած զանիկա ընդունէր է: Դուն ո՞վ ես որ ուրիշին ծառան կը դատես. իր Տէրոջը կը կանգնի կամ կ'իյնայ. բայց պիտի կանգնի, վասն զի Աստուած կարող է զանիկա կանգնեցնել: Մէկը մէկ օրը ուրիշ օրէ աւելի կը յարգէ, մէկն ալ ամէն օրը մէկ կը սեպէ. թող ամէն մարդ իր միտքը հաճեցնէ: Ան որ կը հոգայ օրը, Տէրոջը կը հոգայ եւ ան որ չի հոգար օրը, Տէրոջը չի հոգար ու ան որ կ'ուտէ, Տէրոջը կ'ուտէ, քանզի Աստուծմէ կը գոհանայ եւ ան որ չ'ուտէր, Տէրոջը չ'ուտէր ու Աստուծմէ կը գոհանայ: Վասն զի մեզմէ ոեւէ մէկը իր անձին համար չ'ապրիր, կամ իր անձին համար չի մեռնիր: Քանզի եթէ ապրինք, Տէրոջը համար կ'ապրինք եւ եթէ մեռնինք, Տէրոջը համար կը մեռնինք. ուրեմն թէ՛ ապրինք եւ թէ՛ մեռնինք, մենք Տէրոջն ենք: Վասն զի Քրիստոս ալ անոր համար մեռաւ ու ապրեցաւ, որ թէ՛ մեռելներուն եւ թէ՛ կենդանիներուն իշխէ: Իսկ դուն ինչո՞ւ քու եղբայրդ կը դատես կամ դուն ինչո՞ւ

քու եղբայրդ կ'անարգես. վասն զի ամենքս ալ Քրիստոսին ատեանին առջեւ պիտի կանգնինք: Վասն զի գրուած է. «Ես կենդանի եմ, կ'ըսէ Տէրը, որ ամէն ծունկ ինծի պիտի ծոյ եւ ամէն լեզու Աստուած պիտի դաւանի»: Ուրեմն մեզմէ ամէն մէկը Աստուծոյ հաջիւ պիտի տայ իր անձին համար:

Ա՛լ զիրար չդատենք, հապա որոշենք մեր մտքերուն մեջ՝ խոչ կամ գայթակղութիւն չդնել ոեւէ եղբօր: Ասիկա զիտեմ ու համոզուած եմ Տէր Յիսուսով, թէ բա՛ն մը ինքնիրմէ պիտի չէ, բայց պիտի չէ անոր, որ պիտի կը նկատէ: Իսկ եթէ կերակուրի համար եղբայրդ տրտմեցնես, սիրով վարուած չես ըլլար. քու կերակուրովդ մի՛ կորսնցնէր զանիկա՝ որուն համար Քրիստոս մեռաւ: Թող ձեր բարին չար խօսքերու նշաւակ չըլլայ: Վասն զի Աստուծոյ արքայութիւնը կերակուր ու խմելիք չէ, հապա արդարութիւն եւ խաղաղութիւն ու խնդութիւն Մուրբ Հոգիով: Քանզի եթէ մէկը այս բաներով Քրիստոսին ծառայէ, անիկա Աստուծոյ հաճելի կ'ըլլայ ու մարդոցմէ կը գովուի: Ուրեմն իրարու հետ խաղաղութեամբ եւ շինութեամբ ապրինք: Կերակուրի պատճառով Աստուծոյ գործը մի՛ քակէք: Ամէն բան մաքուր է. միայն այն մարդուն գէշ է, որ ուրիշը կը գայթակղեցնէ: Աղէկ է միս չուտել եւ զինի չխմել եւ ոեւէ բան չընել՝ որով քու եղբայրդ կրնայ իյնալ կամ գայթակղիլ, կամ տկարանալ: Դուն հաւատք ունի՛ս. զանիկա քեզի պահէ Աստուծոյ առջեւ. երանի՛ անոր որ իր անձը չի դատապարտեր անով, որ ինք կ'ընդունի: Բայց ան որ կը խղճահարուի, եթէ ուտէ՝ կը դատապարտուի, վասն զի հաւատքով չ'ուտեր, քանզի ի՛նչ բան որ հաւատքով չէ՝ մեղք է:

## **ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ (6.1-21)**

«Զգոյշ եղէք որ ձեր ողորմութիւնը մարդոց առջեւ չընէք՝ անոնց երեսնալու համար, եթէ ոչ՝ վարձք չէք առնէր ձեր Հօրմէն որ երկինքն է: Ուստի երբ ողորմութիւն կ'ընես, առջեւդ փող մի՛ հընչեցնէր, ինչպէս կեղծաւորները ժողովարաններուն ու փողոցներուն մեջ կ'ընեն, որպէս զի մարդոցմէ փառաւորուին. ճշմարիտ կ'ըսեմ քեզի. 'Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան': Իսկ դուն երբ ողորմութիւն կ'ընես, ձախ ձեռքդ թող չգիտնայ աջ ձեռքիդ ինչ տալը, Որպէս զի քու ողորմութիւնդ գաղտուկ ըլլայ եւ քու Հայրդ

որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ»:

«Ու երբ աղօթք կ'ընես, կեղծաւորներուն նման մի՛ ըլլար, որոնք կը սիրեն ժողովարաններուն մէջ ու հրապարակներուն անկիւնները կայնելով աղօթք ընել, որպէս զի մարդոց երեւնան. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան: Իսկ դուն երբ աղօթք կ'ընես, մտիր քու ներքին սենեակդ ու դուռդ գոցել եւ աղօթք ըրէ քու Հօրդ որ գաղտուկ տեղ կը գտնուի եւ քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ: Երբ աղօթք կ'ընէք, հեթանոսներուն պէս շատախօս մի՛ ըլլաք, վասն զի կը կարծեն թէ իրենց շատ խօսելուն համար պիտի լսուին: Ուրեմն անոնց մի՛ նմանիք, վասն զի ձեր Հայրը ձեզի պէտք եղածը գիտէ՝ դեռ դուք իրմէ չխնդրած: Ուստի այսպէս աղօթք ըրէք դուք.

՝Ով Հայր մեր որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. Քու թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ ինչպէս երկինքը՝ նոյնպէս երկրի վրայ. Մեր ամէն օրուան հացը այսօր ալ մեզի տուր, Մեզի ներքէ մեր պարտքերը ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտականներուն. Ու մեզ փորձութեան մի՛ տանիր, հապա չարէն մեզ ազատէ. քանզի քուկդ է թագաւորութիւնը եւ զօրութիւնը ու փառքը յաւիտեանս: Ամէն՝:

Վասն զի եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի պիտի ներէ. Իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի պիտի չներէ ձեր յանցանքները»:

«Երբ ծով կը պահէք, կեղծաւորներուն պէս տրտումներես մի՛ ըլլաք. քանզի իրենց երեսները կ'աւրեն որպէս զի մարդոց երեւնան թէ ծով կը պահեն. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. Մանաք իրենց վարձքը առած կ'ըլլան՝: Բայց դուն երբ ծով կը պահես, զլուխդ օժէ ու երեսդ լուս, Որպէս զի մարդոց ծով պահողի պէս չերեւնաս, հապա քու Հօրդ՝ որ գաղտուկ տեղ կը գտնուի: Քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի հատուցում պիտի ընէ»:

«Երկրի վրայ ձեզի գանձեր մի՛ դիզէք, ուր ցեցը ու ժանգը կ'ապականեն, ուր գողերը պատ կը ծակեն ու կը գողնան. Հապա ձեզի գանձեր դիզեցէք երկինքը, ուր ո՛չ ցեցը եւ ո՛չ ժանգը կ'ապականեն ու ո՛չ գողերը պատ կը ծակեն եւ կը գողնան: Քանզի ձեր գանձը ուր որ է, սրտերնիդ ալ հոն պիտի ըլլայ»:



## Romains

### 13.11-14.23

Même vu la saison, parce qu'il est déjà temps de nous réveiller du sommeil; car maintenant le salut est plus près de nous, que lorsque nous avons cru. La nuit est passée et le jour est approché; rejetons donc les œuvres de ténèbres, et soyons revêtus des armes de lumière. Conduisons-nous honnêtement [et] comme en plein jour; non point en gourmandises, ni en ivrogneries; non point en couches, ni en insolences; non point en querelles, ni en envie. Mais soyez revêtus du Seigneur Jésus-Christ; et n'ayez point soin de la chair pour [accomplir] ses convoitises

Or quant à celui qui est faible en la foi, recevez-le, et n'ayez point avec lui des contestations ni des disputes. L'un croit qu'on peut manger de toutes choses, et l'autre qui est faible mange des herbes. Que celui qui mange [de toutes choses], ne méprise pas celui qui n'en mange point; et que celui qui n'en mange point, ne juge point celui qui en mange : car Dieu l'a pris à soi. Qui es-tu toi, qui juges le serviteur d'autrui? s'il se tient ferme ou s'il bronche, c'est pour son propre maître; et même [ce Chrétien faible] sera affermi; car Dieu est puissant pour l'affermir.

L'un estime un jour plus que l'autre, et l'autre estime tous les jours [également, mais] que chacun soit pleinement persuadé en son esprit. Celui qui a égard au jour, y a égard à cause du Seigneur; et celui aussi qui n'a point égard au jour, il n'y a point d'égard à cause du Seigneur; celui qui mange [de toutes choses], en mange à cause du Seigneur, et il rend grâces à Dieu; et celui qui n'en mange point, n'en mange point aussi à cause du Seigneur, et il rend grâces à Dieu. Car nul de nous ne vit pour soi-même, et nul ne meurt pour soi-même. Mais soit que nous vivions, nous vivons au Seigneur; ou soit que nous mourions, nous mourons au Seigneur; soit donc que nous vivions, soit que nous mourions, nous sommes au Seigneur. Car c'est pour cela que Christ est mort, qu'il est ressuscité, et qu'il a repris une nouvelle vie; afin qu'il domine tant sur les morts que sur les vivants.

Mais toi pourquoi juges-tu ton frère? ou toi aussi, pourquoi méprises-tu ton frère? certes nous comparâtrons tous devant le siège judiciaire de Christ.

Car il est écrit : je suis vivant, dit le Seigneur, que tout genou se ploiera devant moi, et que toute langue donnera louange à

Dieu. Ainsi donc chacun de nous rendra compte pour soi-même à Dieu.

Ne nous jugeons donc plus l'un l'autre; mais usez plutôt de discernement en ceci, [qui est] de ne mettre point d'achoppement ou de scandale devant [votre] frère. Je sais et je suis persuadé par le Seigneur Jésus, que rien n'est souillé de soi-même; mais cependant si quelqu'un croit qu'une chose est souillée, elle lui est souillée. Mais si ton frère est attristé de te [voir manger] d'une viande, tu ne te conduis point [en cela] par la charité; ne détruis point par la viande celui pour lequel Christ est mort. Que l'avantage dont vous jouissez ne soit point exposé à être blâmé. Car le Royaume de Dieu n'est point viande ni breuvage; mais il est justice, paix, et joie par le Saint-Esprit. Et celui qui sert Christ en ces choses-là, est agréable à Dieu, et il est approuvé des hommes. Recherchons donc les choses qui vont à la paix, et qui sont d'une édification mutuelle. Ne ruine point l'œuvre de Dieu par ta viande. Il est vrai que toutes choses sont pures, mais celui-là fait mal qui mange en donnant du scandale. Il est bon de ne point manger de viande, de ne point boire de vin, et de ne faire aucune autre chose qui puisse faire broncher ton frère, ou dont il soit scandalisé, ou dont il soit blessé. As-tu la foi? aie-la en toi-même devant Dieu. [Car] bienheureux est celui qui ne condamne point soi-même en ce qu'il approuve. Mais celui qui en fait scrupule, est condamné s'il [en] mange, parce qu'il n'[en mange] point avec foi; or tout ce qui n'est point de la foi, est un péché.

## **Matthieu**

### **6.1-21**

Prenez garde de ne faire point votre aumône devant les hommes, pour en être regardés; autrement vous n'en recevrez point la récompense de votre Père qui est aux cieux.

Lors donc que tu feras ton aumône, ne fais point sonner la trompette devant toi, comme les hypocrites font dans les Synagogues, et dans les rues, pour en être honorés des hommes; en vérité je vous dis, qu'ils reçoivent leur récompense. Mais quand tu fais ton aumône, que ta main gauche ne sache point ce que fait ta droite. Afin que ton aumône soit dans le secret, et ton Père, qui voit [ce qui se fait] en secret t'en récompensera publiquement.

Et quand tu prieras, ne sois point comme les hypocrites; car ils aiment à prier en se tenant debout dans les Synagogues et aux

coins des rues, afin d'être vus des hommes; en vérité je vous dis, qu'ils reçoivent leur récompense. Mais toi, quand tu pries, entre dans ton cabinet, et ayant fermé ta porte, prie ton Père, qui [te voit] dans ce lieu secret; et ton Père qui te voit dans ce lieu secret, te récompensera publiquement.

Or quand vous priez, n'usez point de vaines redites, comme font les Païens; car ils s'imaginent d'être exaucés en parlant beaucoup. Ne leur ressemblez donc point; car votre Père sait de quoi vous avez besoin, avant que vous le lui demandiez.

Vous donc priez ainsi : notre Père qui es aux cieux, ton Nom soit sanctifié.

Ton Règne vienne. Ta volonté soit faite sur la terre comme au ciel.

Donne-nous aujourd'hui notre pain quotidien.

Et nous quitte nos dettes, comme nous quittons aussi [les dettes] à nos débiteurs.

Et ne nous induis point en tentation; mais délivre-nous du mal. Car à toi est le règne, et la puissance, et la gloire à jamais. Amen. Car si vous pardonnez aux hommes leurs offenses, votre Père céleste vous pardonnera aussi [les vôtres]. Mais si vous ne pardonnez point aux hommes leurs offenses, votre Père ne vous pardonnera point non plus vos offenses.

Et quand vous jeûnerez, ne prenez point un air triste, comme font les hypocrites; car ils se rendent tout défaits de visage, afin qu'il paraisse aux hommes qu'ils jeûnent; en vérité je vous dis, qu'ils reçoivent leur récompense. Mais toi, quand tu jeûnes, oins ta tête, et lave ton visage; Afin qu'il ne paraisse point aux hommes que tu jeûnes, mais ton Père qui est présent dans [ton] lieu secret; et ton Père qui te voit dans [ton] lieu secret, te récompensera publiquement.

Ne vous amassez point des trésors sur la terre, que les vers et la rouille consomment et que les larrons percent et dérobent. Mais amassez-vous des trésors dans le ciel, où ni les vers ni la rouille ne consomment rien, et où les larrons ne percent ni ne dérobent. Car où est votre trésor, là sera aussi votre cœur.





## Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան

### Մարտ – Mars

4, Երկուշաբթի – Ա. Օր Մեծի Պահոց

Lundi 4 – 1er jour du Jeûne du Carême

5, Երեքշաբթի – Բ. Օր Մեծի Պահոց

Mardi 5 - 2ème jour du Jeûne du Carême

6, Չորեքշաբթի – Գ. Օր Մեծի Պահոց

Mercredi 6 - 3ème jour du Jeûne du Carême

7, Հինգշաբթի – Դ. Օր Մեծի Պահոց

Jeudi 7 – 4ème jour du Jeûne du Carême

8, Ուրբաթ - Ե. Օր Մեծի Պահոց

Vendredi 8 - 5ème jour du Jeûne du Carême

9, Շաբաթ – Զ. Օր Մեծի Պահոց

Տօն Սրբոյն Թեոդորոսի Զօրավարին:

Samedi 9 – 6ème jour du Jeûne du Carême

Fête du general Saint Théodore

### ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Ծերանալու արուեստը այն է, որ ըլլաս երիտասարդներուն նեցուկ՝ ո՛չ թէ արգելք, ուսուցիչ՝ ո՛չ թէ մրցակից, հասկցող՝ ո՛չ թէ անտարբեր:

Անտրէ Մորուս

«Հետեւեցէք հոգիի գեղեցկութեան, մարմնի գեղեցկութեան համար դրախտը ՉԵՆ ԽՈՍՏԱՑԱԾ մեզի»:

Ս. Պաիսիոս Աթոսացի

## ՄՐԲՈՑ ՂԵՒՆՂԵԱՆՑ


Ղեւնդեանց քահանաներու տօնը կը նախորդէ Վարդանանց յիշատակի օրուան: Աւարայրի ճակատամարտին մասնակից հայ հոգեւորականները հաւաքաբար եւ ի պատիւ Ղեւնդ Երեցին, կը կոչուին Ղեւնդեանք: Ղեւնդ Երեց Սուրբ Յոգիով ներշնչուած՝ կը խանդավառէր հայ մարտիկներին՝ քաջութեամբ մարտնչելու ի սեր Զրիստոսի, ի սեր Եկեղեցւոյ, յանուն հայրենեաց:

Ղեւնդեանց քահանաները Աւարայրի ճակատամարտին հրաշքներ կը գործէն: Ղեւնդ Երեց ճակատամարտէն առաջ այսպէս կը խօսէր հայ մարտիկներուն հետ. «Եղբայրներ՛ր, չըվախնաք մահակից ըլլալու մեր Փրկիչին՝ Զրիստոսին: Որովհետեւ եթէ անոր հետ մեռնինք, անոր հետ ալ կը կենդանանանք: Դուք ալ մեր բոլոր սուրբ մարտիրոսներուն պէս հրաւիրուած էք մաս կազմելու երանելիներու դասին, որոնց մասին ըսուած է. «Պատուական է Աստուծոյ առջեւ իր սրբերուն մահը»:

Ղեւնդ Երեցն իր խօսքով կը ոգեշնչէ հայ մարտիկներուն: Զրիստոսի զինուորները, Սուրբ Յոգիով զօրացած, կ'աղաղակեն. «Սեր մահը թող հաւասարի արդարներու մահուան եւ մեր արեան հեղումը՝ սուրբ մարտիրոսներու արեան: Տէրը ընդունելի թող ընէ այս կամաւոր գոհաբերութիւնը եւ իր Եկեղեցին հեթանոսներու ձեռքը չյանձնէ»: Հայ քաջերը հերոսաբար կը մարտնչին իրենց հայրենիքի եւ հաւատքի համար: Աւարայրի ճակատամարտին պարսից Հազկերտ թագաւորը կը համոզուի, որ անհնար է հայ մարդուն կտրել իր Եկեղեցիէն եւ քրիստոնէական հաւատքէն:

Աւարայրի ճակատամարտէն ետք Ղեւնդ Երեցին, Յովսէփ կաթողիկոսին, անոնց հետ եւս եօթ հոգեւորականներու շղթայակապ Պարսկաստան կը տանին եւ կը բանտարկեն: Ռեւանի մօտ հայ հոգեւորականներու մարտիրոսական վախճանի պահուն երկինքը մութ ամպերով կը ծածկուի, կայծակներ կը փայլատակեն, երկիրը կը դողայ եւ լոյս կ'իջնէ նահատակներուն վրայ:

Սեր Եկեղեցին սրբացուցած է Ղեւնդեանց քահանաներուն եւ Ղեւնդեանց տօնը հայ քահանայական դասի տօնը դարձուցած է: Անոնց յիշատակի օրը Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ աւանդաբար քահանայական ձեռնադրութիւն կը կատարուի: Ղեւնդեանց տօնը Վարդանանց տօնէն երկու օր առաջ՝ երեքշաբթի օրը կը նշուի:



## ՄՐԲՅ ՎԱՐՂԱՆԱՆՑ

Հայ եկեղեցւոյ տօներէն ամենէն ժողովրդական եւ կրօնագային բնոյթ ունեցողը՝ Վարդանանց տօնն է:

Ան խղճի, հաւատքի եւ ժողովուրդի մը ինքնուրոյնութեան եւ ազատութեանց վրայ ի գործ դրուած բռնութիւններու դէմ, հայութեան համընդհանուր ընդվզումին, անհուն զոհողութիւններու յանձառութեանց եւ գիտակցուած վսեմ նահատակութիւններու խորհրդանշն է, որ ոչ միայն Հայոց համար հպարտառիթ աւանդ մըն է, այլ եւ ուսանելի էջ մը ընդհանուր ազգերու պատմութեան մէջ:

### ԱՒԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ



Պարսիկներու թագաւոր Յագկերտը 450 թուականին հրովարտակ մը դրկեց հայ ժողովուրդին եւ հրամայեց, որ հայերը հեռանալով Քրիտոնէութենէն կրկին կռապաշտ դառնան: Սակայն հայերը մերժեցին պարսիկ թագաւորին հրամանը եւ ապստամբեցան Պարսկաստանի դէմ: 451 թուականի Մայիսին պարսիկները 300 հազարանոց բանակով մը, հայերը հնազանդեցնելու համար Հայաստանի վրայ յարձակեցան, հայոց սպարապետ Վարդան Մամիկոնեանը իր 66 հազարանոց բանակով ընդառաջ

գնաց եւ Տղմուտ գետին եզերքը ճակատեցաւ թշնամիին դէմ, Վարդանին ընկերացաւ Ղեւոնդ Երեց իր հաչով եւ Աւետարանով: Չինուորական պատրաստութեան հետ հոգեւոր պատրաստութիւն ալ տեսան, որովհետեւ համոզուած էին որ մարտիրոսութեան կ'երթային: Ղեւոնդ Երեց պատարագեց եւ հաղորդեց բոլոր զինուորները: Յարձակումը հայկական այրուծին սկսաւ եւ անցնելով Տղմուտ գետը սկսաւ հերոսական ճակատամարտը: Երեկոյեան դաշտը դիակներով ծածկուած էր, Վարդանի հետ նահատակուեցան նաեւ 1036 քաջարի զինուորներ, իսկ պարսիկները եռապատիկ աւելի մարդ կորսնցուցին: Վարդանի նահատակութենէն ետք հայ բանակը նահանջեց, սակայն հայերը իրենց ցոյց տուած հերոսութեամբ բարոյական այնպիսի յաղթանակ մը տարին, որ դարերը չկրցան ջնջել անոր փառքը:

**ՄԵԶԻ ՄԻԱՑԷՔ՝  
ՄԵԾ ՊԱՀՔԻ ԱՄԵՆԱՄԵԱՅ  
ՀՈԳԵԻՈՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ**

Ըստ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ օրացոյցին, այս կիրակի Բուն Բարեկենդան է. այսինքն դէպի Մեծ Պահքի օրհնրւած շրջանը առաջնորդող կիրակին: Մեծ Պահքը 40 օրուայ շրջան մըն է որ կը սկսի Բուն Բարեկենդանին յաջորդող երկուշաբթին եւ կը վերջանայ Ծաղկազարդի կիրակին: Մեծ Պահքը տարբեր մարգարէներու եւ աստուածաշունչի մէջ նշուող անձերու մեկուսացման եւ ծոմապահութեան, ինչպէս նաեւ մեր Տիրոջ կատարած 40 օրուայ ծոմապահութեան օրինակներուն վրայ հիմնրւած է: Մեծ Պահքը երէք սկզբունքներ ունի՝ աղօթք, ծոմապահութիւն եւ բարեգործութիւն: Թէեւ այս երէք տարրերը քրիստոնէական կեանքի մէկ մասն են, բայց Մեծ Պահքի ընթացքին մենք մեր ուշադրութիւնը ալ աւելի կը կեդրոնացնենք ասոնց վրայ: Աղօթքին մէջ կեդրոնանալը մեզի կ'օգնէ որ աւելի լաւ հաղորդակցինք Աստուծոյ հետ եւ զգանք իր ներկայութիւնը: Ծոմապահութիւնը կ'օգնէ մեզի որ կրթենք մեր մարմինը եւ մարմնական ցանկութիւններէն հեռու պահենք: Վերջապէս, բարեգործութիւնը մեր հաւատքը գործադրելու հիմնական ուղիներէն մէկն է: Ինչ կը նշանակէ յայտարարել, որ մենք Քրիստոսին կը հաւատանք, երբ իրականութեան մէջ մենք չենք ըներ ինչ որ ան մեզմէ կը պահանջէ: Հիմա որ Մեծ Պահքը կը մօտենայ, այս ամենամեայ հոգեւոր ճամբորդութեան ընթացքին եկէք միանանք Հայ Եկեղեցւոյն եւ միլիոնաւոր Քրիստոնէաներուն Մեծ Պահքին՝ Ծրագրելով մեր ամենօրեայ աղօթքի եւ ծոմ պահելու ձեւը ու բարեգործութեան միջոց մը ընտրելով:

**REJOIGNEZ-NOUS  
DANS LE VOYAGE SPIRITUEL ANNUEL DU CAREME**

Selon le calendrier de l'église arménienne, ce dimanche est Poon Parégentan (c'est-à-dire le dimanche qui nous mène à la saison bénie du Grand Carême). Ce week-end est une période de célébration publique pour les Arméniens en prévision de la prochaine saison



d'examen de soi, de maîtrise de soi, de jeûne et de prière. Le carême est une période de quarante jours qui commence le lundi suivant Poon Prégéntan et se termine le dimanche des Rameaux. Le carême est conçu par l'église, basé sur les exemples bibliques de la retraite et du jeûne de divers prophètes et personnalités bibliques, y compris le jeûne de notre Seigneur pendant quarante jours. Le carême repose sur trois principes: la prière, le jeûne et l'aumône. Bien que les trois



éléments fassent partie de la vie chrétienne, nous sommes appelés à intensifier notre attention sur ces aspects. Se concentrer sur notre discipline de prière a pour but de nous aider à mieux communiquer avec Dieu et à être en sa présence. Le jeûne nous aide à discipliner notre corps et sa dépendance aux désirs charnels. Cela nous aidera à contrôler ces désirs et à ne pas asservir nos corps à eux. Enfin, l'aumône et l'aide aux pauvres sont l'un des principaux moyens par lesquels nous mettons notre foi en action. Que signifie proclamer que nous croyons en Christ, alors qu'en fait nous ne faisons pas ce qu'il nous a demandé de faire? Alors, à l'approche du carême, veuillez envisager de vous joindre sérieusement à l'Eglise arménienne dans cet exercice annuel et ce voyage spirituel. Planifiez votre propre discipline de prière quotidienne; votre programme de jeûne (qui exclut généralement les produits venant d'animaux et les produits laitiers). Et choisissez une ou plusieurs causes pour aider ceux qui sont dans le besoin.



# ՇԱԲԹՈՒԱՅ ՊԱՏԳԱՄԸ

## ԱՂԱՄ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐՂԻՆ

«Աղամ Աստուծոյ որդին է» (ՂՈՒԿ. Գ 38), քանի որ ան Աստուծմէ ստեղծուեցաւ: Աղամ, իբրեւ Աստուծոյ «մարդեղէն որդի»ն՝ կատարեալ էր, քանի որ Աստուծոյ ստեղծածն էր, եւ Աստուած կատարեալ է եւ Անոր գործն ալ նոյնպէս եւ մի՛շտ կատարեալ է: Աղամ այնպէս ստեղծուած էր որ իր կամքը գործածելով իր Արարչին հնազանդ ըլլար եւ իրեն ընծայուած կեանքին օրհնութիւնները վայելելու առիթը ունենար, եւ կամ գիտակցաբար՝ իր կամքով անհնազանդ ըլլար:

Արարչին հնազանդութիւնը եթէ կեանքը վայելել է, անհնազանդութիւնն ալ պատճառ է որ կորսնցնէ Աղամ իր կեանքը եւ կեանքի բոլոր իրաւունքները: Արդարեւ «ազատ կամք»ի բնական հետեւանքն է ասիկա: Յետեւաբար, Աղամ կատարեալ ըլլալով հանդերձ, իր հաւատարմութիւնը եւ հնազանդութիւնը փորձուելու ենթակայ էր: Աղամ գիտակցաբար մեղանչեց՝ եւ այդպէս դադրեցաւ «Աստուծոյ որդի»ն ըլլալէ. «Աղամ չէր որ խաբուեցաւ» (Ա ՏԻՄ. Բ 14), հետեւաբար՝ կամովին եւ գիակցաբար ընտրած մեղքին համար ան մահուան դատապարտուեցաւ եւ որոշ ատենին մեռաւ, իր բոլոր զաւակները, մենք եւ մեր նախահայրերը, անոր մեղանչելէն վերջ ծնած ըլլալով, նոյն դատապարտութեան ենթարկուեցանք:

Աղամի զաւակները կրնային կամովին Աստուծոյ ծառայել իրենց «անկատար կարողութիւններ»ուն ներած չափով, եւ կամ՝ կրնային իրենց կեանքին սակաւաթիւ տարիներուն իրենց սիրտը կարծրացնել Անոր բարութեանը նկատմամբ:

«Ձեզի ընտրեցէք այսօր թէ որո՛ւ պիտի ծառայէք... Բայց ես եւ իմ տունս Աստուծոյ պիտի ծառայենք» (ՅԵՍ. ԳԴ 15): Սակայն նոյնիսկ անոնք որ հաստատ կերպով մտադրած էին Աստուծոյ ծառայել՝ անզօր էին իրենց ան-

ձերուն համար յաւիտենական կեանք ձեռք բերել առանց Աստուծոյ օգնութեանը:

«Մարդէ մը մեղքը աշխարհի մտաւ, եւ այն մեղքէն մահը, եւ այնպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ մահը, քանի որ ամէնը մեղանչեցին» (ՅՌՈՍ. Ե 12), կ'ըսէ Պօղոս առաքեալ, ակնարկելով Ադամի մեղանչումին:

Եւ իբրեւ կատարեալ մարդ մը՝ Յիսուս նախկին «կատարեալ մարդ» Ադամի համահաւասար աստիճան ունէր. արդա՛ր, անմե՛ղ, անթերի՛ մարդեղէն արարած ըլլալով. Ան կատարեալ մարդ էր. «Թեպէտ Աստուածորդի էր, բայց իր չարչարանքներու փորձառութեամբ սորվեցաւ՝ թէ ի՛նչ բան է հնազանդութիւնը: Եւ այսպէս, կատարեալ ըլլալէ ետք, յաւիտենական փրկութեան պատճառ եղաւ բոլոր անոնց համար՝ որոնք իրեն կը հնազանդին, քանի Աստուած զինք քահանայապետութեան կոչած էր, Մելքիսեդէկ քահանային պէս» (ԵԲՐ. Ե 8-10): Իր անթերի հնազանդութեամբ Յիսուս ոչ միայն իր Ֆիզիքական՝ հապա նաեւ իր նուիրման կատարելութիւնը ցոյց տուաւ իր Զօրը, եւ ատոր համար Ան խիստ բարձրացուեցաւ եւ մեծ Զահանայապետը եղաւ որ «բուն երկինք»ը մտնէ եւ իր մարդկային կատարեալ զոհագործութեան արժանիքը ընծայէ, բոլոր իրեն հնազանդողներուն համար:

Ուստի Ադամի որդեգրածէն տարբեր ուղղութեան մը հետեւելով, որ Աստուծոյ օրէնքին չհնազանդելով ամբողջ մարդկութիւնը մահուան ենթարկած էր, Յիսուս իբրեւ փառաւորեալ Զահանայապետ այդ փրկագինը երկնից մէջ ներկայացնելով՝ ի վիճակի է Ադամի զաւակներուն մէջ գտնուող հաւատացեալները ազատել այն ժառանգական անկարողութիւններէն՝ որոնց ներքեւ ծնած էին: Իր զոհագործութեան արժէքը անոնց հաշւոյն գործածելով՝ Ան զանոնք կը գնէ, մեղքէ եւ մահէ կը փրկէ, որպէսզի անոնք Զօրը առջեւ արդարանան Որդւոյն միջոցաւ. (Ա ԿՈՐՆԹ. 2 20, Է 23):

Ադամ այդ ,փրկուածներէն չէ: Քանի որ ան կամովին, գիտակցաբար մեղանչեց. արդարօրէն մահուան դատապարտուեցաւ եւ մեռա՛ւ, եւ Աստուած չէր կրնար իր արդար դատաստանը փոխել եւ կեանք շնորհել Ա-

դամի: Աստուած ողորմած է բայց նաեւ՝ արդար: Ուստի Ադամ կատարեալ կեանք մը ունէր եւ կորսնցուց զայն:

Փրկանքը Ադամի համար որեւէ կարգադրութիւն չէ ըրած: Սակայն՝ ինչ որ Ադամ ըրաւ իրմէ վերջ ծնած իր խոշոր ընտանիքին համար, ատոր ճիշդ հակառակը՝ Յիսուս Բրիստոս հաւատացեալները համապատասխան գնով մը կը փրկէ:

Այդ փրկագնին արժէքը գործածելով՝ Յիսուս Ադամի ընտանիքին «շատերեուն վրայէն ժառանգական դատապարտութիւնը կը վերցնէ, եւ անոնք կ'ըլլան փրկուած»-ները:

«Բոլոր մարդոց կեանքի արդարութեան շնորհք եղաւ Յիսուս Բրիստոսի միջոցաւ» (ՅՌՈՄ. Ե 18): Ուստի անհատ մը իր բռնած ընթացքով կը վճռէ թէ ինք ի վերջոյ Բրիստոսի փրկանքի զոհագործութենէն օգուտ պիտի ստանա՞յ թէ ոչ: Փրկանքի արժէք եւ կեանք բռնութեամբ չի տրուիր գիտակցօրէն ամբարշտութիւն ընողներուն, Աստուծոյ կարգադրութեան նկատմամբ խստասրտութիւն ցոյց տուողներուն, այլ. «Ան որ Որդւոյն կը հաւատայ, յաւիտեական կեանք ունի. եւ ան որ Որդւոյն չի հնազանդիր, անիկա կեանք պիտի չտեսնէ հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ» (ՅՈՎՅ. Գ 36): Այսպէս երեւան կը բերուի Աստուծոյ, Մեծ Փրկչին անաչառութիւնը:

Աստուծոյ յիշողութեանը մէջ գտնուող մեռեալներուն յարութիւնը եւ ի վերջոյ անոնց կեանք ստանալը միեւնոյն փրկանքի կարգադրութեան հետ կապուած է: Յիսուս իր Անձը «փրկանք» տուաւ այն ամէնուն համար՝ որ զինք իբրեւ Միջնորդ ընդունելով Աստուծոյ հետ ուխտ կ'ընեն. (ՏԻՄ. Բ 5-6): Փրկանքը պարտականութիւն մը եւ սքանչելի պատահութիւն մըն է անկէ օգտուողներուն համար:

Աղբիւր՝  
**ՍԱՇՏՈՑ ԲԱՅԱՆԱՅ ԳԱԼՓԱՔԵՏԱՆԻ**  
քարոզներէն

## ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹԸ



### ԱՂՕԹՔ ՅԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

Քու խաղաղութեամբդ, ով Քրիստոս Փրկիչ մեր, որ մտքէ ու խելքէ շատ վեր է, ամուր եւ անվնաս պահէ զմեզ ամէն չարութենէ, հաւասարէ զմեզ քու ճշմարիտ երկրպագուներուդ հետ, որոնք հոգիով եւ ճշմարտութեամբ քեզի երկրպագութիւն կ'ընեն, վասնզի Ամենասուրբ Երրորդութեանդ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### PRIÈRE POUR LA PAIX

Christ, notre sauveur, dans ta paix qui dépasse toutes pensées et paroles, fortifie-nous et garde-nous sans peur devant tout mal; mets-nous au rang de tes vrais adorateurs, qui t'adorent en esprit et en vérité, car à la très Sainte Trinité conviennent la gloire, la souveraineté et l'honneur, maintenant et toujours et pour l'éternité de l'éternité. Amen.

# ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON**  
**À L'ÉGLISE**



**DONATION**  
**FOR THE CHURCH**

## CHURCH:

Mr. Manvel Markosyan \$40

## RENOVATION FUND:

Mr. & Mrs. Aret Tasciyan \$100

## IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

### THE LATE SETA BEDIKYAN:

Mr. & Mrs. Yetvart Paylan \$200, Mr. & Mrs. Nuran & Aline Turnayan, Mr. & Mrs. Ayk & Rina Bagdasarian, Dr. Vilma Derbekyan \$100, Mr. & Mrs. Murat & Nadya Armutlu, Ladies Auxiliary of St. Gregory Church \$60, Mr. Agop Sirinyan, Mr. Hrayr Kurkcuoglu, Mr. Aleksan Demircioglu, Mrs. Anahid Turnayan, Mr. Ari Bagdasaryan, Mr. Levon Senoglu, Dr. Arto Demirjian, Mr. & Mrs. Emile & Sella Kutlu, Mr. & Mrs. Hrayr Hekimoglu, Mrs. Hilda Hacikyaner, Mr. & Mrs. Sarkis Sekeryan, Mr. & Mrs. Kapriyel & Irma Ferah \$50, Mr. & Mrs. Azad Loris Filizli, Mrs. Arpi Cihanoglu, Mr. Jirayr Gazeryan, Mr. & Mrs. Harutyun Cihanyan \$40, Mr. Asot Kasparyan, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy, Mr. Aram Der Movsesyan \$30, Mr. Libarid Gamsaragan \$25, Mr. Marten Yorgantz, Mrs. Azad Sedefci \$20

### THE LATE MANUSAK HARPOT:

Verti Store Inc. \$100

### HOKEHANKISD:

### THE LATE KEVORK BULUR:

Mr. & Mrs. Yetvart Paylan, Mrs. Vilma Bulur \$150, Mrs. Sona Hazarabedian, Mr. & Mrs. Oskan Hazarabedian \$100, Mrs. Leda Bulur \$50

### THE LATE MARTHA YEGHIAYAN:

Dr. Edouard Yeghiayan \$100, Mr. Aram Masseredjian, Mrs. Alice Yeghiayan \$50

### THE LATE PAPKEN & MELINE SIRINYAN:

Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan \$100,  
Mrs. Mayranus Ozoglu \$20

### TZNOUNT YOUGHAKIN:

Mr. & Mrs. Noubar & Alidz Bostanian \$100



**ԽՈՐՀՈՒՐԴ  
ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ**

Այն հաւատացեալները, որոնք իրենց հանգուցեալ սիրելիին կամ հարազատին համար ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ կը խնդրեն, պէտք է նկատի ունենալ թէ անհրաժեշտ է Սուրբ Պատարագի սկիզբէն ներկայ գտնուիլ եկեղեցի եւ մասնակցիլ աղօթքներուն. վասն զի, Սուրբ Պատարագի վերջաւորութեան կատարուելիք Հոգեհանգստեան Պաշտօնէն գատ, Պատարագիչ քահանան իր լուռ աղօթքներուն մէջ եւս կը յիշէ մեր բոլոր ննջեցեալներն ու յատկապէս անոնք՝ որոնց համար խնդրանք մատուցուած է:

**CONSEIL POUR LES MESSES DE REQUIEM**

Nous informons les personnes qui désirent faire un REQUIEM à l'intention de leur chers disparus, qu'elles doivent être présentes à l'église dès le début de la Sainte Messe puisque le père évoque le nom des défunts dans ses prières cachées pendant la Sainte Messe. Il est même préférable de donner le nom des défunts la veille en prévenant l'Église ou en contactant le Père.

**ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ԱՂՕԹՔ**

Քրիստոս Աստուծոյ որդին, որ անոխակալ եւ բարեգութ ես,  
քու արարչական սիրովդ գթա  
հանգուցեալ ծառաներուդ հոգիներուն:  
Յիշէ զանոնք արքայութեանդ գալստեան մեծ օրը:  
Արժանի ըրէ ողորմութեան, քաւութեան  
եւ մեղքերու թողութեան:  
Չանոնք սուրբերուդ աջակողմը դասելով պայծառացուր :  
Որովհետեւ դուն ես ամենուն Տէրն ու արարիչը.  
ողջերուն եւ մեռելներուն դատաւորը:  
Եւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնը եւ պատիւը.  
Այժմ եւ միշտ եւ յաւիտեան, ամէն:



**ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ԿԻՐԱԿԻ, 3 Մարտ 2019**



Տիկ. Անի Արապեանի  
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ ամուսնոյն, **հօր եւ մեծ հօր՝  
ՍԱՐԳԻՍ ԱՐԱՊԵԱՆԻ (SARKIS ARABIAN)**  
մահուան 40-ին առիթով

(Սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Տ. եւ Տիկ. Սուրատ եւ Չուարթ Թագւորեանի,  
Տ. եւ Տիկ. Զայկ եւ Մարգրիտ Պասմաճեանի եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Նուրիան եւ Յասմիկ Ճանքուլի եւ զաւակներուն,  
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ՅԱԿՈԲ ԵՒ ՊԵՐՃՈՒՅԻ ԹԱԳԱՌՈՐԵԱՆՆԵՐՈՒ  
(HAGOP & BERJUHI TAKVORIAN)**

Յոգիներուն ի հանգիստ  
Ինչպէս նաեւ

**ԹԱԳՈՐԵԱՆ ԵՒ ՏԵՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ-ՕՉԱԼՓ  
(TAKVORIAN & DER MEGUERDITCHIAN-OZALP)**

Գերդաստաններու համայն ննջեցելոց Յոգիներուն ի հանգիստ  
Ինչպէս նաեւ

**ԳԵՈՐԳ ԵՒ ԱՐՇԱԼՈՅՍ ՃԱՆՔՈՒԼԻ  
(KEVORK & ARSHALUYS CANKUL)**

Յոգիներուն ի հանգիստ  
Ինչպէս նաեւ

**ՃԱՆՔՈՒԼ ԵՒ ԱՂԱՄԵԱՆ (CANKUL & ATAMIAN)**

Գերդաստաններու համայն ննջեցելոց Յոգիներուն ի հանգիստ

(Սուրճի սպասարկութիւն Ծխական Խորհուրդին սենեակին մէջ)



Տ. ԵՆ ՏԻԿ. ԱՐԵՔ ԹԱՇՃԵԱՆԻ,  
 Տ. ԵՆ ՏԻԿ. ՍՈՒՓԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ,  
 Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
 իրենց սիրեցեալ ծնողաց ԵՆ ՄԵԾ ԾՆՈՂԱԳ՝  
**ՍԻԻՉԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ (SUZAN TASCIYAN)**  
 մահուան 14-րդ տարելիցին առիթով  
 ինչպէս նաեւ՝  
**ՆՈՒՊԱՐ ԹԱՇՃԵԱՆԻ (NUBAR TASCIYAN)**  
 մահուան 35-րդ տարելիցին առիթով



ՏԻԿ. ՍԻՐՈՒԼԻ ՍԿՐՈՒՅԵԱՆԻ,  
 Տ. ԵՆ ՏԻԿ. ՆՈՐԱՅՐ ԵՆ ՓԱՅԼԻՆ ԿԻՐԱՆԱԿԻԼԻ,  
 Տ. ԵՆ ՏԻԿ. ԺԻԼԱԵՐ ԵՆ ՌԻՆԱ ՍԿՐՈՒՅԵԱՆԻ ԵՆ ՂԱՆԱԿՆԵՐՈՒՆ՝  
 ԱԼԵՔԻ ԵՆ ՄԱՐԳԻ, ՄԱՐԹԵՆ ԿԻՐԱՆԱԿԻԼԻ, ՄԵԼԻՍԱ ԿԻՐԱՆԱԿԻԼԻ,  
 Տ. ԵՆ ՏԻԿ. ՍԱՐԳԻՍ ԵՆ ԱՆԱԽԻՍ ԿԻՐԱՆԱԿԻԼԻ ԵՆ ՂՆՏԱՆԻՔԻՆ,  
 Տ. ԵՆ ՏԻԿ. ԱՐԹԻՆ ԵՆ ՄԱՆՈՒՀԱԿ ԿԻՐԱՆԱԿԻԼԻ ԵՆ ՂՆՏԱՆԻՔԻՆ,  
 ՏԻԿ. ԱԳՆԻՍ ԶԱՐԻՔԵԱՆԻ ԵՆ ՂՆՏԱՆԻՔԻՆ (Ա.Մ.Ն.),  
 Տ. ԵՆ ՏԻԿ. ՎԱԽԱՆ ԵՆ ՍԷՅԻ ՊԱՍՄԱԾԵԱՆԻ ԵՆ ՂՆՏԱՆԻՔԻՆ (Ա.Մ.Ն.),  
 Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
 իրենց սիրեցեալ հօր, եղբօր, մեծ հօր ԵՆ մեծ մեծ հօր՝  
**ԼԵՒՈՆ ԿԻՐՆԱԿԻՆԻ (LEVON GURNAGUL)**  
 մահուան առաջին տարելիցին առիթով



ՏԻԿ. ԶԻԼՏԱ ԷՐՄԵՆԻ (ՊՈԼԻՍ),  
 Տ. ԵՆ ՏԻԿ. ՆՈՐԻԿԱՆ ԵՆ ՅԱՍՄԻԿ ԾԱՆԵՐՈՒԼԻ ԵՆ ՂՆՏԱՆԻՔԻՆ,  
 Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
 իրենց սիրեցեալ ամուսնոյն ԵՆ հարազատին՝  
**ԹԱՆԳՐԵԹ ԷՐՄԵՆԻ (TANKRET ERMEN)**  
 Զոգույն ի հանգիստ

**ՏԵՐԸ ՅԻՇԷ ՆՆՁԵՑԵԱԼՆՆԵՐԸ**  
**ԵՒ**  
**ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՅՆԷ**

**«ՈՂՋՈՅՆ»-Ի ԲԱՆԱԶԵԻԵՐ  
SALUT DE PAIX**

Յարգելի հաւատացեալներ,  
Սուրբ Պատարագի ընթացքին «Սուրբ Ողջոյն» կը  
փոխանակենք:

Այդ առթիւ, «Ողջոյն» տուողը պէտք է ըսէ.-  
Pendant la Sainte Liturgie, on échange le baiser de la paix.

Celui qui salue dit:

**1) Յունուարի 5-էն մինչեւ 13-ը:**

**Du 5 au 13 Janvier**

**Ծնունդի ութ օրերուն.-**

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ est né et s'est révéélé»

**2) Զատիկէն մինչեւ Համբարձում.-**

**À partir de Pâques jusqu'à l'Ascension.-**

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՑ»

«Le Christ est ressuscité d'entre les morts»

**3) Միւս օրերուն.-**

**Les autres jours.-**

«ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՁ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ s'est révéélé parmi nous»

«Ողջոյն» ստացողը պէտք է պատասխանէ .-

Celui qui reçoit le salut réponds:

**1- Ծնունդի ութ օրերուն.-**

«ՕՐՀՆԵԱԼ Է ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Naissance du Christ»

**2- Զատիկէն մինչեւ Համբարձում.-**

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Résurrection du Christ»

**3- Միւս օրերուն.-**

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Révélation du Christ»



## **ՆԻՍ ՈՒ ԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ**

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հըրաւիրենք հետեւեալ պարագաները.

1. Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդութիւն ստանալէ առաջ:
2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձենան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:
3. Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագուրումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:
4. Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արարողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատրաստուինք դուրս գալ Եկեղեցին, պետք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ: Եկեղեցին ա-դօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՌՈՒԹԻՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՆ պետք է տիրէ:

## **OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER**

Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:

- 1) Les fidèles doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.
- 2) Les femmes doivent avoir la tête couverte pour communier.
- 3) Chaque fois que nous entrons dans l'Eglise pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.
- 4) Il est rappelé que l'Eglise est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.

Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.

**Website:** [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)

Սիրելի հաւատացեալներ,  
Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի,  
թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ  
**Կայքէջը - Website [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**  
Ուր կարելի է գտնել Եկեղեցւոյ յայտարարութիւնները  
եւ ձեռնարկները:

Կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները  
եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն  
համացանցային դրութեամբ:  
Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Chers Paroissiens,  
Nous avons le plaisir de vous informer  
de la récente mise à jour de notre  
**Site: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**  
Ou vous trouvez les dernières nouvelles des activités  
et des événements.  
*Nous remercions de votre soutien!*

Dear Parishioners,  
We are glad to inform you our Church's newly developed  
**Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**  
where you will read the latest church news and events,  
meanwhile you can also make your online church donations  
and benefiting from other possibilities of our Website.  
*Thank you for your support!*

### **Ուշադրութիւն Մեր Սիրելի Հաւատացեալներուն**

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէ ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:

Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

*Ծիական Խորհուրդ*

### **Attention to our beloved parishioners**

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.



## Կարևոր Ցայտարարություն

### Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովի

Միրով կուզենք տեղեկացնել մեր հայազն հաւատացելոց, որ հակառակ մեր ուղարկած նամակներուն, փոփոխութիւն տեղի ունեցած է Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովի կայանալիք օրւան թուականին հետ:

Հայցելով Ձեր ազնիւ ներողամտութիւնը կը հաստատենք, որ Տարեկան Ընդհանուր Անդամական Ժողովը վերջնականապէս տեղի պիտի ունենայ **Կիրակի, Մարտ 17-ին**, յաւարտ Սբ. Պատարագի:

Արդ նոյն հաւատքով եւ նուիրումով կը սպասենք բոլորդ ամբողջացնելու մեր սոյն ժողովը, որ պիտի նպաստէ ծուխիս յառաջխաղացման եւ Եկեղեցւոյս առաւել կազմակերպման :

Շնորհակալութիւն

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ





## ԽԱՂԱՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

*Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին*

**Մարտ 6 – Ապրիլ 18**

**2019**

**Մարտ 6 – Արժ. Տ. Հայ Արի Զինյ. Թանաշեան**  
*Պահոց Ընթրիք – Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան*

**Մարտ 13 – Արժ. Տ. Տրդատ Զինյ. Թաշճեան**  
*Պահոց Ընթրիք – Թէքէեան Սշակութային Միութիւն*

**Մարտ 20 – Արժ. Տ. Կոմիտաս Զինյ. Միրզախանեան**  
*Հոգեւոր Հովիւ- Լաւալի Ս. Խաչ Հայց. Առաք Եկեղեցւոյ*  
*Պահոց Ընթրիք – Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Ընտանիք*

**Մարտ 27 - Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան**  
*Առաջնորդ Գանատահայոց Թեմի*  
*Պահոց Ընթրիք – Տիկ. Փառանձեմ Գեորգեան եւ Թամար*

**Ապրիլ 3 – Գերյ. Հ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան**  
*Ժողովրդապետ Հայ Կաթողիկէ Համայնքի*  
*Պահոց Ընթրիք – Տիկ. Ռոզ Տիգրանեան*

**Ապրիլ 10 – Պատուելի Յովհաննէս Սվաճեան**  
*Հոգեւոր Հովիւ - Հայ Աւետարանական Եկեղեցւոյ*  
*Պահոց Ընթրիք – Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք*

**Ապրիլ 18 – Աւագ Հինգշաբթի**  
**Աւագ Հինգշաբթի Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ**  
**«Մարի Մանուկեան» սրահին մէջ**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 /

Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ



Տ. ԴԱԻԹ ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ  
ՀԵՏ

Études bibliques et discussions  
avec le R.P David Margaryan

**Տեղի կ'ունենայ ամէն Հինգշաբթի  
երեկոյեան՝ ժամը 7:00-ին Եկեղեցոյ մէջ:**

Les jeudis soirs à compter de 19 heures

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները  
մասնակից ըլլալու

Տ. Դաւիթ Զինյ. Մարգարեանի՝  
Ներկայացուցած

Աստուածաշնչական նիւթերուն:

Nous invitons nos chers fidèles à participer  
à ces séances d'interprétations bibliques.

**Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն**

**Une collation de café et de thé est servie.**

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին  
Ներկայութիւնը:

Nous comptons sur votre  
participation massive.



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:

(514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Հայց. Առաքելական  
Ս. Գրիգոր Լուսավորիչ  
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

**Եթե ունիք հասցեի փոփոխություն,  
հաճեցե՛ք ձեր նոր տուեալները փոխանցել  
Եկեղեցւոյ քարտուղարութեան:**



**Vous avez déménagé cette année?  
S'il-vous-plaît, veuillez nous informer  
de votre nouvelle adresse.**

**Have you moved this year?  
Please do not forget to inform us of  
your new address.**

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2  
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)





**Հայց. Առաքելական  
Ս. Գրիգոր Լուսավորիչ  
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

**Դաշնակի Դասընթացքներ**

Փոքրերու եւ չափասերու համար  
Սկզբնականերու եւ երաժշտութեան հետեւողներու համար  
Անհատական դասընթացքներ պիտի կատարուին՝  
Ամէն Կիրակի ժամը 11-էն սկսեալ ,  
արհեստավարժ եւ փորձառու դաշնակահարուհի՝

**ԶԻՆԱՅՏԱ ՎԱՐՈՍԵԱՆԻ** հետ:

Շրջանաւարտ երաժշտագետ McGill համալսարանէն  
եւ արժանացած Քեպեքի Ոսկեայ Մետալին  
երաժշտական ծիրէն ներս:

Յաւելլեալ մանրամասնութիւններու համար  
կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակ՝  
հեռ. (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com  
կամ ուսուցչուհի՝ Զինայտա Վարոսեանի հետ  
հեռ. (514) 945-586 zinaida.varosian@mcgill.ca

**Piano lessons with a concert pianist**

All ages – Children / Adults  
For beginners & Music trainees  
Individual courses will be held every Sunday at 11:00 am

Many years of experience  
Theory & harmony  
Preparation for Examen and competitions.  
Master of Music in Performance from Mc Gill University  
Quebec Gold Medalist

For further information  
contact to the church office  
at (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com  
or Teacher- Zinaida Varosian  
at (514)945- 5816 / zinaida.varosian@mcgill.ca

**615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2**

ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ

TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY



MAY 7, 2019



MAY 20, 2019



The Women's Guild Central Council,  
with the blessings of  
H.G. Bishop Abgar Hovakimyan,  
Primate of the Armenian Diocese of Canada,  
organizes a



**TRIP TO THE ARMENIAN HERITAGE  
SITES IN TURKEY**

(Istanbul, Rodosto (Tekirdag), Bursa, Efes,  
Cappadocia, Kayseri, Adana, Musa Dag).



Cost \$2,200 USD (double occupancy)  
\$2,600 USD (single occupancy)



Included: 13 nights accommodation at nice  
hotels, Breakfasts & dinners,  
professional guides (Armenian & English),  
Bosphorus by boat,  
transportation with high end buses,  
domestic flight.



Not included: international airfare, lunches,  
drinks, balloon tour in Cappadocia.



**Places are limited !**  
**Deposit \$500 by March 7.**  
**Full payment by March 31.**



For details, please contact the Diocese at (514) 276-9479 or [contact@armenianchurch.ca](mailto:contact@armenianchurch.ca), or  
WGCC Chair, Mrs. Anita Ohanessian at (647) 984-8568 or [anita-ot@hotmail.com](mailto:anita-ot@hotmail.com), or  
Mrs. Ayda Afarian at (416) 885-0303 or [aydaafarian@gmail.com](mailto:aydaafarian@gmail.com)







ՀԱՅՑ. ԱՌԱՋ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻԶ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

### ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել  
Bernard փողոցին վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



### PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

**Address :** 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2